ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

(ծածկագիր՝ 2.2-126)

ա) վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և համայնքային ծառայողների ատեստավորման, ինչպես նաև Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՀՈԱԿ-ներ) և հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ ՓԲԸ-ներ) գործադիր մարմինների (այսուհետ՝ տնօրեններ) ընտրության (նշանակման) մրցույթների (այսուհետ՝ մրցույթներ) նախապատրաստական աշխատանքները (համայնքային ծառայության և ՀՈԱԿ-ների ու ՓԲԸ-ների տնօրենների թափուր պաշտոնների մրցույթների անցկացման համար հայտարարությունների հրապարակում, հայտարարված մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիներից փաստաթղթերի ընդունում, մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառում համարակալված մատյանում և այդ տվյալների մուտքագրում համապատասխան համակարգչային ծրագիր, մրցույթին մասնակցելու համար փաստաթղթեր ներկայացնելու ժամկետի ավարտից հետո ոստիկանության մարմիններից հարցման միջոցով դիմած քաղաքացիների դատվածության մասին տեղեկատվության ստացում և այլն).

բ) վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և համայնքային ծառայողների ատեստավորման Երևանի քաղաքապետարանի իրավասությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության բնագավառի թեստավորման և հարցազրույցի փուլի հարցաշարերի կազմման աշխատանքները.

գ) վարչության պետին ներկայացնում է հարցաշարերի արդիականացման և մշակման գործընթացների հետ կապված առաջարկներ.

դ) վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է ՀՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների մրցույթների թեստավորման և հարցազրույցի փուլի հարցաշարերի կազմման աշխատանքները.

ե) աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներից և համայնքային ծառայողների ատեստավորումներից, ինչպես նաև ՀՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների մրցույթներից առաջ, Վարչության պետի

հանձնարարությամբ, համեմատում է աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ՀՈԱԿ-ների և ՓԲԸ-ների գործունեության ոլորտներին վերաբերող հարցաշարերի համապատասխանությունը օրենսդրության փոփոխությունների հետ, կատարում է ուղղումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կազմում նոր հարցաշարեր.

զ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի, ինչպես նաև Երևանի քաղաքապետի որոշումների սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշ-տոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, համայնքային ծառայողների ատեստավոր-ման, ինչպես նաև ՀՈԱԿ-ների, ՓԲԸ-ների տնօրենների մրցույթների հարցաշարերի ու իրավական ակտերի հրապարակման աշխատանքները.

է) վարչության պետի հանձնարարությամբ կազմում է հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող աշխատակազմի համայնքային ծառայողների ցուցակները և ներկայացնում Երևանի քաղաքապետի ու աշխատակազմի քարտուղարի հաստատմանը.

ը) վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքներին.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Բարձրագույն կրթություն:

Աշխատանքային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասինե, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասինե, «Հանրային ծառայության մասինե, «Համայնքային ծառայության մասինե, «Նորմատիվ իրավական ակտերի մասինե օրենքների, Աշխատակազմի և Վարչության կանոնադրությունների ու իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2024 թվականի մայիսի 27-ը, ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010 515-132):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ